ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ *****
«ԴԱՍԱԿԱՆ» ԱՎԱՆԴ
(ֆիզիկական անձանց համար)

ք. _____ ** ***** թ

«Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս Վարչության նախագահ-գործադիր տնօրեն *****ի, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, և **********, այսուհետ՝ Ավանդատու (անձը հաստատող փաստաթուղթ ******, տրված է ***-ի կողմից, ********), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին ժամկետային ավանդի պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր հետևյալի մասին.

1. ***Պայմանագրի առարկան***

1.1 Բանկը, ընդունելով Ավանդատուի կողմից տրված ********** (*********) գումար դրամական միջոցները (այսուհետ՝ Ավանդ), պարտավորվում է Պայմանագրով սահմանված պայմաններով Ավանդատուին վերադարձնել Ավանդի գումարը և *** % տարեկան տոկոսադրույքով տոկոսներ վճարել դրա դիմաց:

1.2 Ավանդը ներդրվում է *** օր ժամկետով, ենթակա է վերադարձման ոչ շուտ քան *********թ-ը:

1.3 Ավանդատուի համար բացվող Ավանդային հաշվի համարն է՝ **********:

1.4 Ավանդատուն իրավունք չունի այլ անձանց փոխանցել իր ավանդային հաշվին եղած դրամական միջոցները:

1.5 Ավանդի դիմաց տոկոսների վճարումը կատարվում է ☐ժամկետի վերջում ☐յուրաքանչյուր ամիս:

2. ***Տոկոսներ հաշվարկելու և վճարելու կարգը***

2.1 Բանկն Ավանդատուին Ավանդի դիմաց տոկոսներ է վճարում Պայմանագրով սահմանված չափով՝ բացառապես ՀՀ դրամով՝ փոխանցումը կատարելով Ավանդատուի

☐ բանկային հաշվին **********__ կամ

☐ քարտային հաշվին **********

2.2 Բանկն Ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրում է Ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև գումարն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվա նախորդող օրը ՝ տոկոսների պարզ հաշվարկով:

2.3 Այն դեպքում, երբ Ավանդի տոկոսագումարների և Ավանդի գումարի վճարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վճարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը, սակայն լրացուցիչ տոկոսագումարներ չեն հաշվարկվում:

2.4 Այն դեպքում, երբ Ավանդն Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սույն Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, Բանկն Ավանդատուին վճարում է տվյալ պահին Բանկում գործող ցպահանջ ավանդի տոկոսադրույքով:

2.5 Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է՝ որպես բաժանարար հիմք ընդունելով տարին 365 օր:

3. ***Կողմերի իրավունքներն ու պարտականությունները***

3.1 Բանկն իրավունք ունի՝

3.1.1 Ինքնուրույնաբար տնօրինել Ավանդի գումարը,

3.1.2 Ավանդատուի պահանջով 1.2 կետում նշված ժամկետից շուտ Ավանդը վերադարձնելու դեպքում վերահաշվարկ կատարել և Ավանդի գումարից գանձել ավանդի դիմաց արդեն իսկ վճարված տոկոսագումարները կամ դրանց մի մասը, այնուհետև վերադարձնել վերահաշվարկման արդյունքում մնացած Ավանդի գումարը: Ավանդի տոկոսի վերահաշվարկը կատարվում է՝ ելնելով սույն Պայմանագրի 1.1 կետով սահմանված տոկոսների չափից:

3.1.3 Այն դեպքում, եթե սույն Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Ավանդատուն չի պահանջում վճարել ժամկետային Ավանդի գումարը՝

		ստորագրություն
1	Ավանդի գումարի և նրա նկատմամբ հավելագրված տոկոսները փոխանցել Ավանդատուի 2.1 կետում նշված բանկային հաշվին:	
2	Երկարաձգել սույն Պայմանագիրը նույն ժամկետով, Բանկի տվյալ ժամկետի համար գործող առավելագույն տոկոսադրույքով, իսկ հավելագրված տոկոսները փոխանցել Ավանդատուի՝ Պայմանագրի 2.1 կետում նշված հաշվին:	

3.1.4 Միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, տվյալ օրվա դրությամբ՝ Ավանդատուին վճարելով Ավանդի գումարը և նրա նկատմամբ հաշվեգրված տոկոսները, եթե Ավանդատուն իր վարքագծով որևէ կերպ (զանգվածային լրատվության միջոցներով, գրավոր կամ բանավոր հայտարարությամբ) փորձել է ազդել Բանկի վարկանիշի, գործարար համբավի, հեղինակության վրա և այլ ոչ գույքային իրավունքների վրա:

3.2 Բանկը պարտավոր է՝

3.2.1. Ավանդատուի կողմից Ավանդը կամ դրա մի մասը մինչև սույն Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը պահանջելու դեպքում, Ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնել Ավանդատուին, վերջինիս կողմից այդ մտադրության մասին Բանկին նախօրոք՝ առնվազն *** աշխատանքային օր առաջ տեղեկացնելու պայմանով, պահպանելով Պայմանագրի 2.4 կետի պահանջները:

3.2.2. Ավանդատուին վճարել տոկոսներ Պայմանագրով սահմանված դրույքաչափերով,

3.2.3. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, Ավանդատուին տոկոսներ վճարելիս կատարել եկամտահարկի գանձում համաձայն ՀՀ օրենսդրության:

3.2.4. Ապահովել Ավանդատուի ավանդային գործառնությունների գաղտնիությունը,

3.2.5. Ստանալ իր ավանդային քաղվածքները և «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը՝

Էլեկտրոնային եղանակով ----------_____

էլ.-փոստի հասցե/ ստորագրություն

հաճախորդ	Բանկ

Փոստային կապի միջոցով ----------
ստորագրություն

Բանկի տարածքում՝ առձեռն ----------
ստորագրություն

3.3 Ավանդատուն իրավունք ունի՝

3.3.1 Բանկից պահանջել Ավանդի գումարից վճարել տոկոսներ սույն Պայմանագրով որոշված չափերով և պայմաններով:

3.4 Ավանդատուն պարտավոր է՝

3.4.1 Պահպանել ՀՀ օրենքների, բանկային կանոնների, ժամկետային ավանդների ընդունման մասին Բանկում գործող որոշումների, պայմանների և ընթացակարգերի պահանջները,

3.4.2 Պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխության, անձը հաստատող փաստաթղթի կորստի կամ փոփոխության դեպքում անհապաղ (առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրում) տեղյակ պահել Բանկին՝ անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար,

3.4.3 Ավանդը կամ տոկոսները ստանալիս Բանկ ներկայանալ անձը կամ իրավասությունները հաստատող փաստաթղթով և սույն Պայմանագրով:

4. *Եզրափակիչ դրույթներ*

4.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը:

4.2 Ավանդի վերադարձն ապահովված է սեփականության իրավունքով, Բանկին պատկանող գույքով:

4.3 Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի համաձայնությամբ:

4.4 Սույն Պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5 Ավանդատուի՝ 10 (տասը) միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջները, որոնք ներկայացվում են Բանկի դեմ և կապված են Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ, ներկայացվում են պաշտպանության Ֆինանսական համակարգի հաշտարարին, իսկ 10 (տասը) միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը գերազանցող գույքային պահանջները ենթակա են լուծման դատական կարգով:

5. *Հատուկ դրույթներ*

5.1. Ավանդային հաշվով գործառնություններ չեն իրականացվում: Սույն կետի խախտմամբ Ավանդատուի կողմից Ավանդային հաշվի փոխանցումներ կատարելու մասին Բանկ ներկայացված կարգադրությունները, հանձնարարականները Բանկի կողմից չեն կատարվում և այդ մասին մեկօրյա ժամկետում տեղյակ են պահում Ավանդատուին. որը Բանկի նկատմամբ որևէ պահանջ չի կարող ներկայացնել իր կարգադրությունները, հանձնարարականները չկատարելու կապակցությամբ:

5.2. Ավանդը կամ տոկոսները ստանալու իրավունք ունեն Ավանդատուն, ՀՀ օրենքով սահմանված կարգով Ավանդատուի անունից հանդես գալու լիազորությամբ օժտված անձը կամ վերջինիս կողմից պատշաճ կարգով լիազորված անձը:

5.3. Բանկը չի կարող միակողմանիորեն նվազեցնել Պայմանագրով սահմանված տոկոսների չափը:

5.4. Ավանդատուն կնքում է՝ սույն Պայմանագիրը նախօրոք ծանոթ լինելով Բանկի կողմից ժամկետային ավանդների ընդունման պայմաններին:

5.5. Ժամկետային ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Ավանդատուի բանկային հաշիվներից գանձվում է տարեկան սպասարկման վճար՝ համաձայն Բանկում գործող դրույքաչափերի ու սակագների:

5.6. Սույն Պայմանագիրը կազմվում է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. *Կողմերի հասցեներ*

ԲԱՆԿ	ԱՎԱՆԴԱՏՈՒ
	_____
	անուն ազգանուն
	անձը հաստատող փաստաթուղթ
Հասցե՝	հասցե
Հեռախոս՝	հեռախոս
----------	----------
Կ.Տ. *ստորագրություն*	*ստորագրություն*

հաճախորդ	Բանկ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ,

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Հիմնադրամի գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6, 375010

Հեռախոս՝ (+374 10) 58 35 14

Ինտերնետային կայքը՝ http://www.adgf.am/

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
2. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	**16 միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք. ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություններ, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական տարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդներ ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

հաճախորդ	Բանկ

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեսնօրյա ժամկետում Հիմնադրամը անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը:

Գործընթացը սկսվում է զանգվածային լրատվական միջոցներում հատուցման վերաբերյալ Հիմնադրամի կողմից լրացուցիչ հայտարարություն հրապարակելու պահից: Դուք կարող եք գրավոր պահանջ ներկայացնել ոչ ուշ քան հատուցման դեպքի օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի:

Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ (այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուների մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ) ☐

չերաշխավորված ավանդ ☐

Ավանդատու՝ **********

Անձնագրային տվյալները ՝ **********

Ավանդատու ....
ստորագրություն

Բանկի գործադիր տնօրեն կամ բանկի կողմից լիազորված այլ անձ .....
ստորագրություն
Կ.Տ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

հաճախորդ	Բանկ